

**«Լոռու մարզային ենթակայության հանրակրթական ուսումնական**

**հաստատությունների պաշտոնների թափուր տեղերի համար հայտարարված մրցույթների վերաբերյալ**

**1. «Լոռու մարզի Մեծ Պարնու ակադեմիկոս Միեր Մելքոնյանի անվան միջնակարգ դպրոց» ՊՈԱԿ-ը հայտարարում է մրցույթներ՝ ֆիզիկայի (11 դասաժամ), տղաների տեխնոլոգիայի (4 դասաժամ) և երգ-երաժշտության (2 դասաժամ) ուսուցիչների թափուր տեղերի համար**

Ուսուցչի պաշտոնի համար նախատեսված վարձատրությունը որոշվում է ըստ դասաբաշխման: Մրցույթի մասնակիցների գիտելիքների և մասնագիտական կարողությունների ստուգումն անցկացվելու է երկու փուլով՝ գրավոր և բանավոր՝ ըստ «ԿԳ նախարարության կողմից հաստատված հարցաշարերի:

Մրցույթին մասնակցելու համար անձը հանձնաժողովին է ներկայացնում՝

1. Հանձնաժողովի անունով գրավոր դիմում՝ նշելով այն աշխատատեղը, որին հավակնում է(Ձև 1),
2. Փաստաթուղթ(դիպլոմ)՝ «Հանրակրթության մասին» «օրենքի 26-րդ հոդվածի 1-ին մասի պահանջին համապատասխան որակավորման վերաբերյալ,
3. Անձնագրի պատճենը,
4. Ինքնակենսագրություն(Ձև 4),
5. Թափուր աշխատատեղն զբաղեցնելու համար մասնագիտական գիտելիքներին և աշխատանքային ունակություններին ներկայացվող պահանջների բավարարումը հավաստող փաստաթղթերի, հավաստագրերի պատճենները(դրանց առկայության դեպքում),
6. Մեկ լուսանկար՝ 3x4 չափի,
7. Այլ պետությունների քաղաքացիները՝ Հայաստանի Հանրապետությունում աշխատելու իրավունք,
8. ՀՀ արական սեռի քաղաքացիները ներկայացնում են նաև զինգրքույկ:

Փաստաթղթերի պատճենները պետք է ներկայացնել բնօրինակների հետ:

Փաստաթղթերն ընդունվում են սույն հայտարարության հրապարակման օրվանից մինչև օգոստոսի 28-ը ներառյալ, ամեն օր՝ ժամը 10-ից մինչև 15-ը՝ բացի շաբաթ, կիրակի և ոչ աշխատանքային այլ օրերից:

Փաստաթղթերի ընդունումը կանցկացվի ըստ կարգի:

Մրցույթները տեղի կունենան սեպտեմբերի 2-ին՝ ժամը 12-ին, Մեծ Պարնու ակադեմիկոս Միեր Մելքոնյանի անվան միջնակարգ դպրոցում: Հասցեն՝ գ. Մեծ Պարնի, 1-ին փողոց, շենք 76: Հեռ՝. (0255) 6-20-01, (093) 46-22-36:

## **2. <<<< Լոռու մարզի Կաճաճկուտի հիմնական դպրոց>> ՊՈԱԿ-ի կառավարման խորհուրդը հայտարարում է բաց մրցույթ՝ հաստատության տնօրենի պաշտոնն զբաղեցնելու համար**

Հաստատության տնօրենի պաշտոնի համար անցկացվող մրցույթին մասնակցելու պարտադիր պայմաններն են՝

1. ՀՀ քաղաքացիություն,
2. Բարձրագույն կրթություն,
3. Ուսումնական հաստատության ղեկավարման իրավունք(հավաստագիր):

Մրցույթին մասնակցելու համար պահանջվող փաստաթղթերն են՝

1. Դիմում՝ հաստատության կառավարման խորհրդի նախագահի անունով,
2. ՀՀ քաղաքացու անձնագրի պատճենը,
3. Հաստատության ղեկավարման իրավունքի(հավաստագրի) պատճենը,
4. Տվյալ հաստատության զարգացման ծրագիրը(ներկայացնել մրցույթից առնվազն 3 օր առաջ),
5. Հրապարակված հոդվածների ցանկը կամ գիտական կոչումը հաստատող փաստաթուղթ(դրանց առկայության դեպքում),
6. Աշխատանքային գրքույկի պատճենը:

Փաստաթղթերի պատճենները պետք է ներկայացնել բնօրինակների հետ:

Փաստաթղթերն ընդունվում են մինչև օգոստոսի 30-ը ներառյալ, ամեն օր՝ ժամը 10-ից մինչև 15-ը՝ բացի շաբաթ, կիրակի և ոչ աշխատանքային այլ օրերից:

Փաստաթղթերի ընդունումը կանցկացվի ըստ կարգի:

Մրցույթը տեղի կունենա սեպտեմբերի 10-ին՝ ժամը 13-ին, Կաճաճկուտի հիմնական դպրոցում: Հեռ.՝ (093) 62-54-65:

**3. <<<< Լոռու մարզի Մեծավանի թիվ 2 միջնակարգ դպրոց>> ՊՈԱԿ-ի կառավարման խորհուրդը հայտարարում է բաց մրցույթ՝ հաստատության տնօրենի պաշտոնն զբաղեցնելու համար**

Հաստատության տնօրենի պաշտոնի համար անցկացվող մրցույթին մասնակցելու պարտադիր պայմաններն են՝

4. ՀՀ քաղաքացիություն,
5. Բարձրագույն կրթություն,
6. Ուսումնական հաստատության ղեկավարման իրավունք(հավաստագիր):

Մրցույթին մասնակցելու համար պահանջվող փաստաթղթերն են՝

7. Դիմում՝ հաստատության կառավարման խորհրդի նախագահի անունով,
8. ՀՀ քաղաքացու անձնագրի պատճենը,
9. Հաստատության ղեկավարման իրավունքի(հավաստագրի) պատճենը,
10. Տվյալ հաստատության զարգացման ծրագիրը(ներկայացնել մրցույթից առնվազն 3 օր առաջ),
11. Հրապարակված հոդվածների ցանկը կամ գիտական կոչումը հաստատող փաստաթուղթ(դրանց առկայության դեպքում),
12. Աշխատանքային գրքույկի պատճենը:

Փաստաթղթերի պատճենները պետք է ներկայացնել բնօրինակների հետ:

Փաստաթղթերն ընդունվում են մինչև սեպտեմբերի 2-ը ներառյալ, ամեն օր՝ ժամը 10-ից մինչև 15-ը՝ բացի շաբաթ, կիրակի և ոչ աշխատանքային այլ օրերից:

Փաստաթղթերի ընդունումը կանցկացվի ըստ կարգի:

Մրցույթը տեղի կունենա սեպտեմբերի 11-ին՝ ժամը 13-ին, Մեծավանի թիվ 2 միջնակարգ դպրոցում: Հասցեն՝ գ. Մեծավան, Չարենցի 19: Հեռ.՝ (077) 81-61-38: